ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. հունվարի 26–31–ը Արաբական Միացյալ Էմիրություններ (ք. Դուբայ) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

   Նարեկ Տերյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Արաբական Միացյալ Էմիրություններ՝ ք. Դուբայ, 2022թ. հունվարի 26–31–ը

4. **Հրավիրող կողմը՝**

   «ԷՔՍՊՈ 2020–Դուբայ» համաշխարհային ցուցահանդեսի կազմակերպչական կոմիտե

5. **Գործուղման նպատակը՝**

   «ԷՔՍՊՈ 2020-Դուբայ» համաշխարհային ցուցահանդեսի շրջանակներում Հայաստանի ազգային օրվան մասնակցելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տաղավարի գործունեության համակարգման նպատակով:

6. **Քննարկված թեմաները՝**

   «ԷՔՍՊՈ 2020-Դուբայ» համաշխարհային ցուցահանդեսին ՀՀ պատշաճ մասնակցությունն ապահովելու նպատակով կազմակերպատեխնիկական բնույթի հարցերի քննարկում:
   Այդ թվում՝ էմիրաթական կողմի հետ քննարկվել և իմի են բերվել հայկական տաղավարի ձևավորման տարբերակները՝ համապատասխան տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների համադրությամբ:

Հայաստանի ազգային օրվա միջոցառումը իրականացվել է «Էթնոթեք» գաղափարի շուրջ «Դուբայ 2020 Հայաստան, Էթնոթեք» անվանման ներքո, իսկ կարգախոսը՝ «Նորարար մտքեր»:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Ն. Տերյանը հունվարի 30-ին մասնակցել է «Expo 2020 Dubai» համաշխարհային ցուցահանդեսում Հայաստանի ազգային օրվա պաշտոնական բացման արարողությանը: Միջոցառումը մեկնարկել է ցուցահանդեսի գլխավոր՝ Ալ Վասլ Պլազա կենտրոնական հրապարակում:

Պաշտոնական բացման արարողությունից հետո ողջ օրվա ընթացքում կազմակերպվել են մի շարք մշակութային միջոցառումներ: Մշակութային երեկոն բացել է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը, որը բազմաթիվ հյուրերի և տարբեր երկրներից ժամանած ցուցահանդեսի այցելուների համար ներկայացրել է «Խաչատուրյան ջազ» համերգային ծրագիրը:

Ներկայացվել են Հայաստանի պատմությունը, լեզուն, կրոնը, մշակույթը, գիտական ներուժը: Հիմնական տաղավարը կահավորվել և բաժանվել է գոտիների: Մասնակիցները հնարավորություն են ունեցել այցելել առանձնացված 4 տաղավարներ, որոնք հագեցած են եղել կառուցվածքային, մեխանիկական, թվային ու ինտերակտիվ էլեմենտներով:

Ցուցահանդեսի՝ Հայաստանի ազգային օրվա պաշտոնական բացման արարողությանը ելույթ է ունեցել նաև ցուցահանդեսի կազմկոմիտեի գործադիր տնօրեն Նաջիբ Մոհամմեդ Ալ Ալին, ով շնորհակալություն է հայտնել Հայաստանին միջոցառմանը բարձր մակարդակով մասնակցության համար և ընդգծել, որ ՀՀ մասնակցությունը նմանատիպ խոշորագույն ցուցահանդեսին հիանալի հարթակ է Հայաստանի նորարարական ինտելեկտուալ ներուժի իրագործման համար՝ արհեստական բանականության և մի շարք այլ ոլորտներում:

ՀՀ էկոնոմիկայի նախարար Վ. Քերոբյանի և Շեյխ Սաիդ Բին Ահմեդ Մաքթում անձնական գրասենյակի տնօրեն Հիշամ Ալ Գուրգի հետ՝ Հայաստանում ներդրումային հնարավորությունների քննարկման նպատակով կայացած հանդիպումից առաջ Նարեկ Տերյանը հանդիպել է վերոնշյալ գրասենյակի ֆինանսական տնօրեն Ավինաշ Մանսաբդարի հետ՝ հանդիպման կազմակերպչական հարցերի քննարկման նպատակով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Expo 2020 Dubai» ցուցահանդեսում հունվարի 30-ին կայացած Հայաստանի ազգային օրվա շրջանակում ՀՀ էկոնոմիկայի նախարարության հովանու ներքո Հայաստանի «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի և Աբու Դաբիի առևտրաարդյունաբերական պալատի միջև ստորագրվել է մտադրությունների հուշագիր:

Հայաստանի կողմից փաստաթուղթը ստորագրել է Ներդումների աջակցման կենտրոնի ներդրումների գծով տնօրեն Արամ Վարդանյանը, իսկ ԱՄԷ կողմից՝ Աբու Դաբիի առևտրաարդյունաբերական պալատի գլխավոր տնօրեն Մուհամմադ ալ-Մուհաիրին:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

03.02.2022թ.